ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՍԱՂՈՅԱՆ ԵՎԱ ԳԱԳԻԿԻ

ՁԲՈՍԱՇՐՋԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՄԲ

ԺԲ.00.03 Մասնավոր իրավունք (քաղաքացիական, առևտրային (կոմերցիոն), միջազգային մասնավոր, ընտանեկան, աշխատանքային, սոցիալական ապահովության իրավունք) մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ – 2026

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ

САГОЯН ЕВА ГАГИКОВНА

ПРАВОВОЕ РЕГУЛИРОВАНИЕ ДОГОВОРА ОБ ОКАЗАНИИ ТУРИСТИЧЕСКИХ УСЛУГ ПО ГРАЖДАНСКОМУ ЗАКОНОДАТЕЛЬСТВУ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

АВТОРЕФЕРАТ

диссертации на соискание ученой степени кандидата юридических наук по специальности 12.00.03 – Частное право: гражданское право; торговое (коммерческое) право; международное частное право; семейное право; трудовое право; право социального обеспечения.

ЕРЕВАН-2026

Ատենախոսության թեման հաստատվել է
Երևանի պետական համալսարանում

Գիտական ղեկավար՝ իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր
Արմեն Մերուժանի Հայկյանց
Պաշտոնական ընդդիմախոսներ՝ իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր
Վահրամ Դավիթի Ավետիսյան
իրավ. գիտ. թեկնածու, դոցենտ
Գրիգոր Հովհաննեսի Բեքմեզյան
Առաջատար կազմակերպություն՝ Ռուս-Հայկական համալսարան

Պաշտպանությունը կայանալու է 2026 թվականի հունիսի 17-ին ժ. 14^{30}-ին ՀՀ ԲԿԳԿ-ի՝ Երևանի պետական համալսարանում գործող իրավագիտության 001 մասնագիտական խորհրդի նիստում (0025, ք. Երևան, Ալեք Մանուկյան 1):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Երևանի պետական համալսարանի գրադարանի գիտաշխատողների ընթերցասրահում:

Սեղմագիրն առաքված է 2026 թվականի մայիսի 17-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական
քարտուղար, իրավ. գիտ. թեկ., ասիստենտ **Ժ. Ա. Ստեփանյան**

Тема диссертации утверждена в
Ереванском государственном университете

Научный руководитель: доктор юрид. наук, профессор
Армен Меружанович Айкянц
Официальные оппоненты: доктор юрид. наук, профессор
Ваграм Давидович Аветисян
кандидат юрид. наук, доцент
Григор Оганесович Бекмезян
Ведущая организация: **Российско-Армянский университет**

Защита состоится 17 июня 2026 года в 14^{30} часов на заседании Специализированного совета КВОН 001 по юриспруденции при Ереванском государственном университете (0025, г. Ереван, ул. Алека Манукяна 1).

С диссертацией можно ознакомиться в читальном зале научных работников библиотеки ЕГУ.

Автореферат разослан 17 мая 2026 года.

Ученный секретарь специализированного совета:
кандидат юридических наук, ассистент **Ж. А. Степанян**

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Ատենախոսության թեմայի արդիականությունը: Զբոսաշրջությունը համաշխարհային տնտեսության երկրորդ ամենաարագ զարգացող ոլորտն է, որն ունի հսկայական ներուժ երկրի զարգացման հետագիծը վերափոխելու համար: Ամբողջ աշխարհում, այդ թվում՝ մեր երկրում զբոսաշրջիկների թիվը վերջին տասնամյակների ընթացքում բազմապատկվել է, և դա պատահական չէ, քանի որ ճանաչողական, հանգստի, առողջարարական, գործնական և զանազան այլ նպատակներով ճանապարհորդությունները ժամանակակից մարդու կյանքի անբաժան մասն են: Չնայած տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման արդի պայմաններում քաղաքացիների կողմից համացանցի միջոցով ճանապարհորդություններն ինքնուրույն կազմակերպելու օրեցօր ընդլայնվող հնարավորություններին՝ շարունակում են կայուն թիվ կազմել այն անձինք, ովքեր նախընտրում են իրենց ճանապարհորդությունը կազմակերպելը վստահել ոլորտի պրոֆեսիոնալներին՝ զբոսաշրջային գործունեության սուբյեկտներին:

1998 թ. ՀՀ քաղաքացիական օրենսգրքի ընդունմամբ որպես ծառայությունների վճարովի մատուցման պայմանագրի տարատեսակ առաջին անգամ հիշատակվեց զբոսաշրջիկության ծառայության մատուցման պայմանագիրը, իսկ զբոսաշրջության՝ որպես առանձին ոլորտի իրավական կարգավորման հիմքերը Հայաստանում դրվեցին 2003 թվականին «Զբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին» ՀՀ օրենքի ընդունմամբ: Այս օրենքը, սակայն, կոչված լինելով համապարփակ ձևով կարգավորելու զբոսաշրջության բնագավառը, սկզբունքային բացերի պատճառով այդպես էլ չապահովեց ոլորտի պատշաճ կարգավորումը՝ ձևավորելով ոչ միասնական իրավակիրառ և դատական պրակտիկա: Մինչդեռ նման իրավիճակն անընդունելի էր թե՛ սպառողների իրավունքների պաշտպանության, թե՛ առաջադեմ փորձին համապատասխանելու տեսանկյունից:

Զբոսաշրջության ոլորտի կարգավորման միջազգային չափանիշներին համապատասխանելու հրամայականից ելնելով՝ Հայաստանի Հանրապետության և Եվրոպական Միության և Ատոմային էներգիայի եվրոպական համայնքի ու դրանց անդամ պետությունների միջև կնքված «Համապարփակ և ընդլայնված գործընկերության» համաձայնագրով Հայաստանը ստանձնել է իր օրենսդրությունը, ի թիվս այլնի, «Փաթեթային ճանապարհորդությունների և առնչվող ճանապարհորդական համաձայնությունների մասին» Եվրոպական խորհրդի և Խորհրդարանի 2015 թվականի նոյեմբերի 25-ի դիրեկտիվին մոտարկելու հանձնառություն:

Ի կատարումն միջազգային պարտավորությունների՝ 2023 թվականին ընդունվեց «Զբոսաշրջության մասին» ՀՀ նոր օրենքը, որով ԵՄ դիրեկտիվից «փոխառվեցին» մի շարք կարգավորումներ: Այնուամենայնիվ, հայրենական զբոսաշրջային օրենսդրությունը ԵՄ օրենսդրությանը մոտարկելու փորձը դժվար է հաջողված համարել: Մասնավորապես՝ սպառողի հետ կնքվող պայմանագրի իրավական բնույթի և զբոսաշրջային գործունեության սուբյեկտների կողմից մատուցվող ծառայությունների շրջանակի վերաբերյալ օրենսդրի ոչ հստակ մոտեցումը, զբոսաշրջային գործունեության սուբյեկտների պատասխանատվությունը կանոնակարգող նորմերի բացակայությունը, օրենքով նախատեսված ֆինանսական ապահովման կառուցակարգին, պայմանագրի էական պայմաններին, դրա փոփոխմանը և լուծմանը և մի շարք այլ հարցերին առնչվող թերի և վիճելի կարգավորումները հետայսու նույնպես խոչընդոտներ են ստեղծելու սպառողների իրավունքների արդյունավետ պաշտպանության համար:

Զբոսաշրջության ոլորտի պայմանագրային հարաբերությունների իրավակարգավորման վերը մատնանշված խնդիրներն ու բացերը և դրանց չեզոքացմամբ այդ հարաբերությունների մասնակիցների իրավունքների և շահերի արդյունավետ պաշտպանության իրավական նախադրյալներ ստեղծելու անհրաժեշտությունն էլ պայմանավորում են ընտրված թեմայի և կատարված ուսումնասիրության արդիականությունը:

Հետազոտության թեմայի մշակվածության աստիճանը և տեսական հիմքերը: Հայրենական իրավագիտության մեջ զբոսաշրջային ծառայությունների մատուցման ինստիտուտն առանձին ուսումնասիրության առարկա չի դարձվել: Աշխատանքի շրջանակներում քաղաքացիական առանձին ինստիտուտների վերլուծության համար տեսական հիմք են հանդիսացել Ա. Հայկյանցի, Տ. Բարսեղյանի, Գ. Բեքմեզյանի աշխատությունները: Օտարերկրյա գրականության մեջ զբոսաշրջային ծառայությունների մատուցման ինստիտուտին ընդհանուր գծերով անդրադարձել են Ս. Ուեզերիլը, Օ. Սադիկովը, Ա. Սերգեևը, Յու. Տոլստոյը, Մ. Բրագինսկին, Վ. Վիտրյանսկին և այլք: Զբոսաշրջության ոլորտում պայմանագրային հարաբերություններին առնչվող առանձին հարցերին նվիրված աշխատանքներ են հրատարակել Ս. Լանդինին, Թ. Աթերթոնը, Ի. Օտչեսկին, Ն. Սիրիկը և Ա. Կուսկովը, Յա. Վոլվաչը, Ս. Զավյալովան, Ե. Պիսարևսկին, Պ. Բարաբանովան, Ն. Գանը և ուրիշներ:

Հետազոտության օբյեկտը և առարկան: Հետազոտության օբյեկտը զբոսաշրջային ծառայությունների մատուցման հարաբերություններն են, հետազոտության առարկան՝ զբոսաշրջության ոլորտը կանոնակարգող օրենսդրական կարգավորումները և դրանցից բխող հիմնախնդիրները, միջազգային, օտարերկրյա և ներպետական դատական պրակտիկան:

Հետազոտության նպատակը և խնդիրները: Հետազոտության նպատակը զբոսաշրջության ոլորտի կարգավորման միջազգային փորձի հետ համեմատության լույսի ներքո ՀՀ օրենսդրական կարգավորումներն ուսումնասիրելն է, առկա թերությունները, բացերը և գործնական խնդիրները վեր հանելը՝ հանդես գալով օրենսդրության կատարելագործմանն ուղղված առաջարկություններով, որոնք համահունչ կլինեն միջազգային չափանիշներին և կբացառեն հակասական իրավակիրառ պրակտիկան: Այս նպատակին հասնելու համար առաջադրվել են հետևյալ խնդիրները.

1) քննարկել զբոսաշրջային ծառայությունները սպառողների և զբոսաշրջային գործունեության սուբյեկտների միջև կնքվող պայմանագրի իրավական բնույթի և դրա առարկայի վերաբերյալ օրենսդրական և տեսական մոտեցումները,

2) վերլուծել այդ պայմանագրի կողմերի իրավական կարգավիճակի, պայմանագրի բովանդակության վերաբերյալ վիճահարույց հարցերը,

3) վեր հանել զբոսաշրջային գործունեության սուբյեկտների պատասխանատվության ֆինանսական երաշխիքի կառուցակարգի առնչությամբ առկա օրենսդրական բացերն ու խնդիրները,

4) բացահայտել քննարկվող պայմանագրի փոփոխման և լուծման ընթացակարգի առանձնահատկությունները,

5) առաջարկել զբոսաշրջային փաթեթում ընդգրկված զբոսաշրջային ծառայությունների մատուցման համար պատասխանատվության սուբյեկտի նախընտրելի մոդել,

6) վերլուծել զբոսաշրջային օպերատորի և զբոսաշրջային գործակալի քաղաքացիական պատասխանատվության տարանջատման հիմնահարցերը,

7) քննարկել զբոսաշրջային գործունեության սուբյեկտներին պատասխանատվությունից ազատելու պայմանները:

Հետազոտության իրավական և փորձառական հիմքերը: Հետազոտության նորմատիվ հիմքն են կազմել ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը, «Զբոսաշրջության մասին», «Սպառողների իրավունքների պաշտպանության մասին» ՀՀ օրենքները և այլ իրավական ակտեր, Եվրոպական Միության արդարադատության դատարանի, Հայաստանի Հանրապետության տարբեր ատյանների դատարանների ակտերը, վերաբերելի միջազգային իրավական փաստաթղթեր, Գերմանիայի Դաշնային Հանրապետության, Ֆրանսիայի Հանրապետության, Լիտվայի Հանրապետության, Իսպանիայի Թագավորության, Միացյալ Թագավորության, Ռուսաստանի Դաշնության, Ուկրաինայի Հանրապետության, Վրաստանի Հանրապետության, Կանադայի և մի շարք այլ երկրների իրավական ակտերը և դատական պրակտիկան:

Հետազոտության ընդհանուր մեթոդաբանությունը: Հետազոտության մեթոդոլոգիական հիմքն են կազմել թե՛ ընդհանուր, թե՛ մասնավոր գիտական մեթոդները: Մասնավորապես, կիրառվել են ընդհանուր գիտական այնպիսի մեթոդներ, ինչպիսիք են ինդուկցիան, դեդուկցիան, անալիզը, սինթեզը, ինչպես նաև մասնավոր գիտական՝ իրավահամեմատական, ձևական իրավաբանական, իրավական մոդելավորման և այլ մեթոդներ:

Հետազոտության գիտական նորույթը: Ատենախոսության գիտական նորույթն այն է, որ հայրենական իրավագիտության մեջ առաջին անգամ համակողմանի վերլուծության են ենթարկվել զբոսաշրջային ծառայություններ մատուցելու ինստիտուտին առնչվող հիմնախնդիրները: Տեսության մեջ արտահայտված կարծիքների, ներպետական և օտարերկրյա պետությունների օրենսդրության, միջազգային կարգավորումների, դատական պրակտիկայի վերլուծության հիման վրա բացահայտվել է զբոսաշրջային գործունեության սուբյեկտների և սպառողների պայմանագրային հարաբերությունների էությունը, կողմերի միջև կնքվող պայմանագրի տեղը քաղաքացիական պայմանագրերի շարքում, քննարկվել են զբոսաշրջային գործունեության սուբյեկտների քաղաքացիական պատասխանատվության, դրա ֆինանսական ապահովման, պայմանագրի փոփոխման և լուծման և թեմային առնչվող մի շարք այլ հիմնախնդիրներ: Արդյունքում կատարվել են ինչպես տեսական եզրահանգումներ, այնպես էլ օրենսդրության կատարելագործմանն ուղղված առաջարկներ:

Ատենախոսության գիտական նորույթն արտացոլված է պաշտպանության ներկայացվող դրույթներում և ատենախոսության եզրակացության մեջ հեղինակի կողմից կատարված տեսական ընդհանրացումներում և գործնական առաջարկություններում:

Պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները.

1. «Զբոսաշրջության մասին» ՀՀ օրենքով սահմանված զբոսաշրջային փաթեթի պայմանագրի և ՀՀ քաղաքացիական օրենսգրքով նախատեսված զբոսաշրջիկության ծառայության մատուցման պայմանագրի հասկացությունների համեմատական վերլուծությունը ցույց է տալիս, որ ոլորտային օրենքով ամրագրված իրավական բնորոշումը չի արտացոլում կողմերի միջև փաստացի ձևավորվող պարտավորության էությունը: Գործող օրենսդրական կարգավորումների պայմաններում միանշանակ չէ նաև զբոսաշրջային փաթեթի և ծառայությունների վճարովի մատուցման պայմանագրերի հարաբերակցության հարցը: Ընդ որում, խնդիրը չի սահմանափակվում եզրութաբանական հարթությամբ. պայմանագրի իրավական բնույթի հարցում նման անհստակությունը բարդություններ է

առաջացնում զբոսաշրջային փաթեթը քաղաքացիական իրավունքների օբյեկտների շարքում դասակարգելու, համապատասխանաբար՝ դրանում ներառված զբոսաշրջային ծառայությունները սպառողների իրավունքների պաշտպանության համարժեք ռեժիմ կիրառելու, պարտավորության խախտման համար պատասխանատվության, իրավահարաբերության մասնակիցների միջև ռիսկերի բաշխման տեսանկյունից: Այդ մասին է վկայում նաև ձևավորված դատական պրակտիկան, երբ զբոսաշրջային գործունեության սուբյեկտների և սպառողների իրավահարաբերությունների նկատմամբ դատարանները կիրառում են ոչ վերաբերելի ամենատարբեր քաղաքացիական ինստիտուտների կարգավորմանն ուղղված նորմեր:

Զբոսաշրջային փաթեթի առանձնահատկությունների ուսումնասիրության արդյունքում հիմնավորվել է, որ դրա՝ որպես ծառայությունների համալիրի առնչությամբ կնքվող պայմանագիրն իր բնույթով ծառայությունների մատուցման պայմանագիր է: Միաժամանակ եզրակացվել է, որ զբոսաշրջային ծառայությունների մատուցման կապակցությամբ կողմերի միջև կնքվող պայմանագրի առարկան, որպես կանոն, ոչ թե զբոսաշրջային գործունեության սուբյեկտների կողմից մատուցվող զբոսաշրջային ծառայությունը կամ դրանց համալիրն է, այլ երրորդ անձանց կողմից մատուցվող ծառայություններից բաղկացած զբոսաշրջային փաթեթի շրջանակներում սպառողների ճանապարհորդությունը կամ առանձին զբոսաշրջային ծառայությունների մատուցումը կազմակերպելը: Ըստ այդմ՝ առաջարկվել է կողմերի իրավահարաբերությունները միջնորդավորող պայմանագրի այնպիսի համապարփակ բնորոշում, որը համահունչ է սպառողին մատուցվող ծառայությունների ցանկացած շրջանակի և լիարժեք արտացոլում է կողմերի միջև առաջացող պարտավորության օբյեկտը և բովանդակությունը:

2. Ատենախոսությունում հիմնավորվել է, որ սպառողի հանդեպ ստանձնած պարտավորությունները արտագնա զբոսաշրջային գործունեության սուբյեկտների կողմից ցանկացած պատճառով չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու կամ դրանց կատարումից հրաժարվելու հետևանքով զբոսաշրջիկի մեկնումը կամ վերադարձն անհնար դառնալու դեպքում ֆինանսական երաշխիքով հատուցում տալու օրենսդրական պահանջն արդարացված չէ ինչպես տնտեսական, այնպես էլ ՀՀ միջազգային պարտավորությունների համատեքստում, քանի որ միջազգային պրակտիկան ընթանում է այն ուղղությամբ, որ պարտադիր ֆինանսական ապահովման պահանջը՝ որպես զբոսաշրջային գործունեության սուբյեկտների տնտեսական գործունեությանն ուղղակի միջամտություն, կիրառվում է միայն որոշակի հիմքերով պարտավորության խախտման դեպքում: Այսինքն՝ դրա կիրառությունն ունի հստակ ուղղվածություն և սահմանափակված է կոնկրետ ռիսկերի ապահովմամբ:

Հետևաբար, առաջարկվել է որպես ֆինանսական կամ ապահովագրական ընկերությունների կողմից տրամադրվող երաշխիքով զբոսաշրջային փաթեթի արժեքի և սպառողի ռեպատրիացիայի ծախսերի հատուցում պահանջելու հիմքեր նախատեսել՝

1) արտագնա զբոսաշրջային օպերատորի և իր անունից գործող արտագնա զբոսաշրջային գործակալի անվճարունակության հետևանքով պարտավորության կատարման անհնարինությունը.

2) տվյալ պայմաններում արտակարգ և անկանխելի հանգամանքների (անհաղթահարելի ուժ) հետևանքով զբոսաշրջային փաթեթում ընդգրկված զբոսաշրջային ծառայությունների մատուցման անհնարինության դեպքում զբոսաշրջային ծառայության(ների) արժեքն արտագնա զբոսաշրջային գործունեության սուբյեկտի կողմից չվերադարձնելը, ինչը պայմանավորված է որոշակի ժամկետում պատվերը չեղարկելու դեպքում ծառայության արժեքը կամ դրա մի մասը չվերադարձնելու՝ զբոսաշրջային ծառայություններ մատուցողների ներքին կանոններով կամ զբոսաշրջային գործունեության սուբյեկտի հետ կնքված պայմանագրով նախատեսված պայմանով:

Բացի այդ, հաշվի առնելով զբոսաշրջային գործունեության սուբյեկտների (որպես այդպիսին ներկայացած անձանց) կողմից ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված առերևույթ հանցագործությունների (կանխամտածված սնանկություն, խարդախություն և այլն) հատկանիշներ պարունակող արարքներ կատարելու դեպքում ապահովագրական երաշխիք կիրառելու օրենսդրական արգելքը և բանկային երաշխիք կիրառելու աննպատակահարմարությունը, առաջարկվել է ներդնել արտագնա զբոսաշրջային օպերատորների և իրենց անունից գործող գործակալների ամենամյա հատկացումների հաշվին ձևավորված երաշխիքային ֆոնդի միջոցներով հատուցման կառուցակարգ, որն ուղղված կլինի ինչպես զբոսաշրջային գործունեության սուբյեկտների (որպես այդպիսին ներկայացած անձանց) հակահրավական գործողությունների առնչությամբ քրեական վարույթ նախաձեռնված լինելու, այնպես էլ երաշխիք տրամադրած ապահովագրական կամ ֆինանսական հաստատության անվճարունակության (սնանկության), զբոսաշրջային գործունեության սուբյեկտի կողմից երաշխիքի պայմանագիր կնքած չլինելու դեպքերում զբոսաշրջային ծառայությունների արժեքը և սպառողի ռեպատրիացիայի ծախսերը հատուցելուն:

3. Քաղաքացիական պայմանագրի էական պայմանների հայեցակարգային ուսումնասիրության լույսի ներքո «Զբոսաշրջության մասին» օրենքով նախատեսված զբոսաշրջային փաթեթի պայմանագրի պարտադիր պայմանների շրջանակի վերլուծությունը վկայում է, որ օրենքով որպես պարտադիր ամրագրված մի շարք պայմաններն ունեն

սոսկ տեղեկատվական բնույթ և չեն համապատասխանում էական պայմանին բնորոշ հիմնական չափանիշին, այն է՝ կողմերի միջև համաձայնեցնելու անհրաժեշտությունը: Այլ խոսքով՝ այս խումբ պայմանները պարտադիր կարող են համարվել պայմանագրում ներառվելու տեսանկյունից, սակայն դրանք չպետք է լինեն պայմանագրի կնքվածությունը պայմանավորող գործոն: Ուստի, առաջարկվել է զբոսաշրջային պայմանագրի պայմանները դասակարգել երկու խմբում. կողմերի միջև համաձայնեցման ենթակա էական պայմաններ, և պայմանագրում ներառվող, սակայն կողմերի միջև համաձայնեցում չենթադրող տեղեկատվական բնույթի պարտադիր պայմաններ:

Այս դասակարգման գործնական նշանակությունն այն է, որ ի տարբերություն պայմանագրի էական պայմանների, որոնցից թեկուզև մեկի վերաբերյալ համաձայնության բացակայությունը կարող է հանգեցնել պայմանագրի չկնքվածության, պայմանագրում երկրորդ խումբ պարտադիր պայմաններից որևէ մեկի բացակայության դեպքում, առաջնորդվելով էստոպելի սկզբունքով, կողմը, որը լրիվ կամ մասնակի կատարել է պարտավորությունը կամ ընդունել է մյուս կողմից նման կատարում կամ այլ կերպ հաստատել է պայմանագրի գործողությունը, չի կարող պայմանագրում այդ պայմանների բացակայության հիմքով հղում կատարել պայմանագրի չկնքվածությանը: Նման լուծումը թույլ կտա բացառել զբոսաշրջային գործունեության սուբյեկտների կողմից դիտավորությամբ պայմանագրում տեղեկատվական բնույթի այս կամ այն պայմանը չներառելու և հետագայում պայմանագրի չկնքվածությանը հղում կատարելու հնարավորությունը՝ սպառողներին չզրկելով իրավունքների պաշտպանությունն այլ եղանակներով իրականացնելու, օրինակ՝ անհրաժեշտ տեղեկատվությունը չտրամադրելու հետևանքով պատճառված վնասի հատուցում պահանջելու հնարավորությունից:

4. «Զբոսաշրջության մասին» ՀՀ օրենքի, ինչպես նաև ոլորտը կանոնակարգող ԵՄ դիրեկտիվի համադրված ուսումնասիրությունը թույլ է տալիս առանձնացնել դրանցով սահմանված զբոսաշրջային պայմանագրի լուծման հիմք հանդիսացող՝ կողմերից յուրաքանչյուրի կողմից պայմանագրի էական խախտումների, ինչպես նաև հանգամանքների էական փոփոխությունների առանձին դրսևորումներ: Ընդ որում, դրանց վերլուծությունը վկայում է, որ պայմանագրի լուծման նշված հիմքերը նախքան ճանապարհորդությունն ի հայտ գալու դեպքում դատական կարգով պայմանագրի լուծումը կարող է ժամանակավրեպ լինել՝ ելնելով այս պայմանագրի ժամկետային բնույթից: Նույն հիմքերը ճանապարհորդությունն սկսվելուց հետո ի հայտ գալու դեպքում ևս, հաշվի առնելով դատական գործընթացի տևականությունը, պայմանագրի

դատական կարգով լուծումը չի կարող ապահովել օպերատիվ և արդյունավետ պաշտպանություն, քանի որ վեճի քննության պահին ծառայությունների մատուցման պարտավորությունը, թեկուզ ոչ պատշաճ կերպով, սակայն փաստացի արդեն կատարված կլինի: Հետևաբար, նման իրավիճակում շահագրգիռ կողմի խախտված իրավունքների դատական պաշտպանությունը, մեր կարծիքով, պետք է ուղղված լինի ոչ թե արդեն սպառված իրավահարաբերությունները post factum դադարեցնելուն, այլ դրանց հետևանքով առաջացած հետևանքները վերացնելուն: Հետևաբար, եզրահանգում է կատարվել առ այն, որ պայմանագրի լուծման՝ օրենքով նախատեսված հիմքերի առկայության դեպքում շահագրգիռ կողմը պետք է հնարավորություն ունենա միակողմանի առանց դատարան դիմելու լուծելու պայմանագիրը՝ զրկված չլինելով դատական կարգով պատճառված վնասի հատուցման հնարավորությունից:

Արտադատական կարգով պայմանագիրը լուծելու իրավունքն անխոչընդոտ իրացնելու նպատակով զուգահեռաբար հիմնավորվել է պայմանագրի լուծման իրավական հետևանքը օրենքով նախատեսելու անհրաժեշտությունը: Ըստ այդմ՝ առաջարկվել է, սահմանել, որ զբոսաշրջային գործունեության սուբյեկտի կողմից պայմանագրի էական խախտման, ինչպես նաև օրենքով թվարկված հանգամանքների էական փոփոխության հիմքով պայմանագիրը միակողմանի լուծվելու դեպքում վերջինս պարտավոր է պատվիրատուին վերադարձնել ծառայության արժեքը, իսկ պատվիրատուն պետք է ազատվի պայմանագիրը վաղաժամկետ լուծելու վճար վճարելու պարտականությունից:

Միաժամանակ, նկատի ունենալով, որ անհնար է սպառիչ սահմանել հանգամանքների էական փոփոխության բոլոր հնարավոր դրսևորումները, եզրահանգվել է, որ կողմերը զրկված չեն ընդհանուր հիմունքներով հանգամանքների այլ էական փոփոխությունների հիմքով դատական կարգով պայմանագիրը միակողմանի փոփոխելու կամ լուծելու հնարավորությունից:

5. Նկատի ունենալով, որ «Զբոսաշրջության մասին» ՀՀ օրենքի կարգավորման դաշտից դուրս են մնացել զբոսաշրջային փաթեթներում (տուրերում) ընդգրկված՝ երրորդ անձանց կողմից մատուցվող զբոսաշրջային ծառայությունների համար քաղաքացիական պատասխանատվության առանձնահատկությունները, ինչպես նաև այն պրակտիկան բացառելու նպատակով, երբ զբոսաշրջային ծառայության մատուցման պարտավորությունը խախտելու համար պատասխանատվության սուբյեկտը պայմանավորված է զբոսաշրջային գործունեության սուբյեկտի և այդ ծառայությունը մատուցողի միջև կնքված պայմանագրի տեսակով՝ առաջարկվել է օրենսդրորեն ամրագրել

զբոսաշրջային փաթեթում ընդգրկված ծառայությունների համար պատասխանատվության հստակ սուբյեկտ:

Մասնավորապես, հաշվի առնելով զբոսաշրջային օպերատորի՝ որպես զբոսաշրջային շուկայի պրոֆեսիոնալ մասնակցի կողմից զբոսաշրջային փաթեթ (տուր) ձևավորելու և դրա շրջանակներում անձամբ կամ զբոսաշրջային գործակալի միջոցով կամ նրա հետ համատեղ սպառողի ճանապարհորդությունը կազմակերպելու պարտականությունը՝ առաջարկվել է սահմանել ինչպես զբոսաշրջային փաթեթում (տուրում) ներառված կամ առանձին զբոսաշրջային ծառայությունների մատուցումը կազմակերպելու, այնպես էլ փաթեթներում (տուրում) ներառված զբոսաշրջային ծառայություններ մատուցելու պարտավորությունը խախտելու համար զբոսաշրջային գործունեության սուբյեկտների պատասխանատվությունը՝ որպես սպառողների իրավունքների պաշտպանությունն ապահովող և կողմերի պայմանագրային հարաբերությունների էությանն առավել համապատասխանող պատասխանատվության կառուցակարգ՝ զբոսաշրջային գործունեության սուբյեկտներին ընձեռելով վնաս պատճառած անձին հետադարձ պահանջ ներկայացնելու իրավունք:

Միաժամանակ, նկատի ունենալով փոխադրման պարտավորությունը խախտելու համար պատասխանատվության առանձնահատկությունները, ինչպես նաև փոխադրման համար զբոսաշրջային գործունեության սուբյեկտների պատասխանատվության մոդելը կիրառող երկրների դատական պրակտիկայում բարձրացվող՝ մի կողմից փոխադրման, մյուս կողմից՝ զբոսաշրջության ոլորտների միջազգային կարգավորումների հիման վրա ներկայացվող հայցերի մրցակցությունը խնդիրը, առաջարկվել է այդ կանոնից բացառություն նախատեսել փոխադրման համար պատասխանատվության սուբյեկտի հարցում: Ըստ այդմ՝ զբոսաշրջային փաթեթում ընդգրկված փոխադրման համար զբոսաշրջային գործունեության սուբյեկտների պատասխանատվությունն առաջարկվել է սահմանափակել միայն կազմակերպչական գործողությունների, այն է՝ փոխադրման և փոխադրողի վերաբերյալ հավաստի, լրիվ և ժամանակին տեղեկատվություն, անհրաժեշտ խորհրդատվություն տրամադրելու, պատվիրատուի (սպառողի) պահանջներին համապատասխան ամրագրում կատարելու և ծառայության արժեքը փոխադրողին ժամանակին փոխանցելու, ինչպես նաև խախտումներից բխող հնարավոր վնասների ծավալը նվազեցնելու նպատակով ողջամիտ միջոցներ ձեռնարկելու պարտականությունները խախտելու համար պատասխանատվությամբ:

6. Զբոսաշրջային օպերատորների կողմից ձևավորված (ձևավորվող) զբոսաշրջային փաթեթների (տուրերի) առնչությամբ զբոսաշրջային

օպերատորների և գործակալների միջև ծագող պայմանագրային հարաբերություններում վերջիններիս կարգավիճակի, գործունեության բովանդակության և նպատակների վերլուծության հիման վրա եզրահանգում է արվել առ այն, որ անգամ այն դեպքում, երբ զբոսաշրջային գործակալը սպառողների հետ հարաբերություններում հանդես է գալիս ոչ թե իր, այլ զբոսաշրջային օպերատորի անունից, այսինքն՝ առերևույթ բացակայում է ձեռնարկատիրական գործունեության հատկանիշներից մեկը, միևնույն է, վերջինս ծառայության մատուցման պարտավորության ինքնուրույն սուբյեկտ է՝ օժտված ինչպես միջնորդային, այնպես էլ իր՝ զբոսաշրջային գործունեության սուբյեկտի կարգավիճակից բխող պարտականությունների շրջանակով: Ըստ այդմ, հաշվի առնելով ձեռնարկատիրական գործունեության հետ կապված պարտավորությունների շրջանակներում մի քանի պարտապանների պարտականությունների համապարտության կանոնը, ինչպես նաև նկատի ունենալով սպառողի ճանապարհորդությունը կազմակերպելու՝ որպես ծառայության մատուցման պարտավորության առարկայի անբաժանելիությունը, առաջարկվել է օրենսդրորեն ամրագրել պարտավորության խախտման համար զբոսաշրջային օպերատորի և գործակալի համապարտ պատասխանատվության կանոնը:

Նույն սկզբունքով սպառողների շահերն առավելագույնս պաշտպանելու նպատակով առաջարկվել է օտարերկրյա զբոսաշրջային օպերատորի ձևավորած զբոսաշրջային փաթեթների շրջանակներում տեղական զբոսաշրջային գործակալի կողմից սպառողների ճանապարհորդությունները կազմակերպելու դեպքում ևս նախատեսել ոչ թե տեղական զբոսաշրջային գործակալի միանձնյա, այլ նշված սուբյեկտների համապարտ պատասխանատվություն՝ բացառությամբ եթե կողմերը միջազգային մասնավոր իրավունքի նորմերով օտարերկրյա տարրի մասնակցությամբ առաջացող պայմանագրային հարաբերություններում կիրառելի իրավունքը որոշելիս, առաջնորդվելով կամքի ինքնավարության սկզբունքով, իրենց հարաբերությունների նկատմամբ սահմանել են կիրառելի այլ իրավունք, որը պատասխանատվության սուբյեկտի վերաբերյալ նախատեսում է այլ կանոն:

7. Զբոսաշրջային ծառայությունների մատուցման պարտավորության կողմերի շահերի հավասարակշռման և զբոսաշրջային գործունեության սուբյեկտների առանց մեղքի պատասխանատվությունը իրավաչափ շրջանակներով սահմանափակելու նպատակով և հիմք ընդունելով ձեռնարկատիրական գործունեության սուբյեկտներին տվյալ պայմաններում արտակարգ և անկանխելի հանգամանքներից բացի օրենքով կամ պայմանագրով նախատեսված դեպքերում պատասխանատվությունից ազատելու՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքով ամրագրված իրավական

հնարավորությունը՝ առաջարկվել է զբոսաշրջային օրենքով նախատեսել զբոսաշրջային գործունեության սուբյեկտներին պատասխանատվությունից ազատելու հատուկ պայմաններ, որոնք են՝ սպառողին վերաբերելի, այսինքն՝ ինչպես վերջինիս մեղքով, այնպես էլ նրա անձի հետ կապված և նրա վերահսկողությունից դուրս գտնվող օբյեկտիվ հանգամանքների հետևանքով պարտավորությունը խախտելը, ինչպես նաև զբոսաշրջային փաթեթում ընդգրկված զբոսաշրջային ծառայություն(ներ)ը մատուցելու պայմանագրային պարտավորությունից չբխող գործողությունների (անգործության) արդյունքում սպառողին արտապայմանագրային վնաս պատճառելը:

Հետազոտության տեսական և գործնական նշանակությունը: Հետազոտության տեսական նշանակությունը զբոսաշրջային ծառայությունների մատուցման ինստիտուտի համալիր և խորը վերլուծությունը, համապատասխանաբար՝ այնպիսի մեկնաբանություններ ու կարգավորումներ առաջարկելն է, որոնք թույլ կտան կիրառել դրանք՝ զբոսաշրջային պրակտիկայի զարգացման արդի պահանջներին համահունչ: Ատենախոսությունում ներկայացված վերլուծությունները լրացնում են պայմանագրային իրավունքի տեսությունը, իսկ դրանց հիման վրա արված առաջարկությունները կարող են օգտակար լինել հարցին նվիրված հետագա գիտական ուսումնասիրություններում, ուսումնական գործընթացում, իրավաստեղծ գործունեության մեջ և միասնական իրավակիրառ պրակտիկա ձևավորելու համար:

Ատենախոսության արդյունքների փորձարկումը: Ատենախոսությունը պատրաստվել է Երևանի պետական համալսարանի քաղաքացիական իրավունքի ամբիոնում: Հետազոտության արդյունքներն ամփոփված են հեղինակի թվով 7 գիտական հոդվածներում, որոնք հրապարակվել են գիտական ամսագրերում և ժողովածուներում:

Աշխատանքի կառուցվածքը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, դրանցում ամփոփված 10 պարագրաֆներից, եզրակացությունից և օգտագործված իրավական ակտերի, գրականության և պրակտիկայի նյութերի ցանկից:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածությունում հիմնավորվել է թեմայի արդիականությունը, ներկայացվել են հետազոտության նպատակը և խնդիրները, օբյեկտը և առարկան, ընդհանուր մեթոդաբանությունը, գիտական նորույթը, պաշտպանության ներկայացվող դրույթները, տեսական և գործնական նշանակությունը, հետազոտության արդյունքների փորձարկումը և

աշխատանքի կառուցվածքը:

Ատենախոսության՝ **«Զբոսաշրջային ծառայությունների մատուցման պայմանագրի ընդհանուր բնութագիրը»** վերտառությամբ առաջին գլուխը բաղկացած է երկու պարագրաֆից:

«Զբոսաշրջային ծառայությունների մատուցման պայմանագրի իրավական բնույթը» վերտառությամբ 1.1 և **«Զբոսաշրջային ծառայությունների մատուցման պայմանագրի առարկայի առանձնահատկությունները»** վերտառությամբ 1.2 պարագրաֆներում համապատասխանաբար քննարկվել են զբոսաշրջային ծառայությունների մատուցման պայմանագրի իրավական բնույթի հետ կապված վիճելի հարցերը, ինչպես նաև ուսումնասիրվել են այդ պայմանագրի առարկայի առանձնահատկությունները: Արդյունքում առաջարկվել է կողմերի հարաբերությունները միջնորդավորող պայմանագրի այնպիսի համապարփակ բնորոշում, որը համահունչ է սպառողին մատուցվող ծառայությունների ցանկացած շրջանակի և լիարժեք արտացոլում է կողմերի միջև առաջացող պարտավորության օբյեկտը և բովանդակությունը:

«Զբոսաշրջային ծառայությունների մատուցման պայմանագրի կողմերը և բովանդակությունը» վերտառությամբ **երկրորդ գլուխը** բաղկացած է երեք պարագրաֆից:

«Զբոսաշրջիկը՝ որպես պայմանագրի կողմ» վերտառությամբ 2.1 պարագրաֆում քննարկվել են զբոսաշրջիկի իրավական կարգավիճակի որոշ հիմնահարցեր՝ կապված այս պայմանագրի շրջանակներում «պատվիրատու», «զբոսաշրջիկ» և «սպառող» կատեգորիաների հարաբերակցության հետ՝ առաջարկելով օրենսդրական հստակեցումներ:

«Զբոսաշրջային գործունեության սուբյեկտը՝ որպես պայմանագրի կողմ» վերտառությամբ 2.2 պարագրաֆում քննարկվել են զբոսաշրջային գործունեության սուբյեկտներին ներկայացվող օրենսդրական պահանջները, մասնավորապես՝ վերջիններիս պատասխանատվության ֆինանսական ապահովման ինստիտուտը, դրա թերություններն ու բացերը, ներկայացվել են օրենսդրական փոփոխությունների առաջարկներ:

«Զբոսաշրջային ծառայությունների մատուցման պայմանագրի բովանդակությունը» վերտառությամբ 2.3 պարագրաֆում անդրադարձ է կատարվել այս պայմանագրի էական պայմաններին՝ սահմանելով օրենքով նախատեսված պարտադիր պայմանների երկաստիճան դասակարգում և առաջարկելով այդ երկու խմբերից յուրաքանչյուրում ընդգրկված պայմանների բացակայության իրավական հետևանքը:

Երրորդ գլուխը՝ «Զբոսաշրջային ծառայությունների մատուցման պայմանագրի փոփոխման և լուծման առանձնահատկությունները:

Զբոսաշրջային գործունեության սուբյեկտների պատասխանատվությունը» վերտառությամբ, բաղկացած է հինգ պարագրաֆից:

«Զբոսաշրջային ծառայությունների մատուցման պայմանագրի փոփոխման և լուծման առանձնահատկությունները» վերտառությամբ 3.1 պարագրաֆում ուսումնասիրվել են զբոսաշրջային պայմանագրի փոփոխման և լուծման կարգի առանձնահատկությունները, պայմանագրից միակողմանի հրաժարվելու ինստիտուտը, առաջարկվել այս պայմանագրի փոփոխման և լուծման հատուկ կարգ, լուծման հիմքերի շրջանակ և լուծման իրավական հետևանքների օրենսդրական ամրագրում:

«Զբոսաշրջային ծառայությունների մատուցման պարտավորության խախտման համար պատասխանատվության սուբյեկտը» վերտառությամբ 3.2 պարագրաֆում վերլուծվել են զբոսաշրջային փաթեթում ընդգրկված զբոսաշրջային ծառայությունների համար պատասխանատվության սուբյեկտի՝ աշխարհում գոյություն ունեցող մոդելները, հիմնավորվել է այդ ծառայությունների համար զբոսաշրջային գործունեության սուբյեկտի պատասխանատվությունը նախատեսելու անհրաժեշտությունը:

«Զբոսաշրջային փաթեթում ներառված փոխադրման համար պատասխանատվության առանձնահատկությունները՝ օդային փոխադրումների օրինակով» վերտառությամբ 3.3 պարագրաֆում հետազոտվել են փոխադրման պարտավորության առանձնահատկությունները՝ օդային փոխադրումների օրինակով, հիմնավորվել է այդ ծառայության համար հենց փոխադրողի պատասխանատվությունը նախատեսելու անհրաժեշտությունը:

«Զբոսաշրջային օպերատորի և գործակալի պատասխանատվության տարանջատման հիմնախնդիրները» վերտառությամբ 3.4 պարագրաֆում ուսումնասիրվել են զբոսաշրջային օպերատորի և գործակալի գործունեության բովանդակությունը և նպատակները, առաջարկվել է նախատեսել պարտավորության խախտման համար վերջիններիս համապարտ պատասխանատվությունը: Նույն սկզբունքն առաջարկվել է ամրագրել նաև օտարերկրյա զբոսաշրջային օպերատորի և տեղական զբոսաշրջային գործակալի համագործակցության դեպքում, բացառությամբ այն դեպքի, երբ վերջիններս միջազգային մասնավոր իրավունքի կանոններով ընտրել են կիրառելի այլ իրավունք:

«Զբոսաշրջային գործունեության սուբյեկտներին պատասխանատվությունից ազատելու պայմանները» վերտառությամբ 3.5 պարագրաֆում քննարկվել են զբոսաշրջային գործունեության սուբյեկտներին պատասխանատվությունից ազատելու հիմքերը, հիմնավորվել օրենքով վերջիններիս պատասխանատվությունից ազատելու հատուկ պայմաններ նախատեսելու անհրաժեշտությունը:

Ատենախոսության եզրակացությունում ներկայացվել են հետևյալ հիմնական առաջարկությունները և եզրահանգումները՝

1. Զբոսաշրջային գործունեության սուբյեկտ(ներ)ի և սպառողի միջև կնքվող պայմանագրի վերաբերյալ «Զբոսաշրջության մասին» ՀՀ օրենքով, ՀՀ քաղաքացիական օրենսգրքով ամրագրված կարգավորումների, միջազգային փաստաթղթերի, ինչպես նաև գրականության մեջ առկա տեսակետների ուսումնասիրության արդյունքում հիմնավորվել է, որ զբոսաշրջային փաթեթը՝ որպես քաղաքացիական իրավունքների օբյեկտ, ծառայություններ-ի ամբողջություն է, ուստի դրա իրային բնույթի վերաբերյալ դատողությունները, ինչպես նաև նշված օբյեկտի հատուցելի փոխանցման գործարքի նկատմամբ «իրացում» և «վաճառք» օրենսդրական եզրույթների օգտագործումն արդարացված չէ: Ավելին, զբոսաշրջային գործունեության սուբյեկտների և սպառողների պայմանագրային հարաբերությունների օբյեկտը զբոսաշրջային փաթեթներից բացի կարող է ընդգրկել նաև տուրեր ու առանձին զբոսաշրջային ծառայություններ, որպիսի հանգամանքը զբոսաշրջային փաթեթի պայմանագրի բնորոշումը սահմանելիս անտեսվել է օրենսդրի կողմից: Ըստ այդմ՝ առաջարկվել է «Զբոսաշրջության մասին» ՀՀ օրենքով սահմանված «զբոսաշրջային փաթեթի պայմանագիր» եզրույթը և դրա բնորոշումը համապատասխանաբար՝ փոխարինել «զբոսաշրջային պայմանագիր» եզրույթով և հետևյալ բնորոշմամբ. ծառայությունների մատուցման պայմանագիր, որով կատարողը՝ զբոսաշրջային գործունեության սուբյեկտը պարտավորվում է պատվիրատուի առաջադրանքով սպառողին մատուցել զբոսաշրջային ծառայություն կամ այդ ծառայությունների համալիր և (կամ) կազմակերպել երրորդ անձանց կողմից զբոսաշրջային ծառայության կամ այդ ծառայությունների համալիրի մատուցումը, իսկ պատվիրատուն պարտավորվում է վճարել այդ ծառայության համար:»:

2. Միջազգային փաստաթղթերով և տարբեր երկրների օրենսդրություններով նախատեսված կարգավորումների, գիտության մեջ առկա տեսակետների և պրակտիկայի համադրված վերլուծությունը թույլ է տալիս պնդել, որ զբոսաշրջային պայմանագրի կողմ հանդիսացող պատվիրատուն ոչ միշտ է նույնանում այդ պայմանագրով մատուցվող ծառայությունները սպառողի հետ, մասնավորապես՝ այն դեպքերում, երբ պատվիրատուի դերում հանդես է գալիս իրավաբանական անձը, կամ պայմանագիրը կնքվում է երրորդ անձի անունից կամ հօգուտ երրորդ անձի:

Ուստի, հիմք ընդունելով ծառայությունների մատուցման պայմանագրի ավանդական սուբյեկտային կազմը, մեր կողմից առաջարկվել է այս պայմանագրով որպես զբոսաշրջային գործունեության սուբյեկտի կոնտրագենտ մատնանշել պատվիրատուին, այսինքն՝ այն անձին, ում առաջադ-

ռանքով զբոսաշրջային գործունեության սուբյեկտը պարտավորվում է համապատասխան ծառայությունը մատուցել պատվիրատուին և(կամ) պայմանագրում նշված այլ սպառող(ներ)ին, և ով պարտավորվում է վճարել այդ ծառայության դիմաց:

Բացի այդ, վերլուծելով պատվիրատուի կողմից հօգուտ երրորդ անձի կնքվող պայմանագրի առանձնահատկությունները՝ եզրահանգում է արվել առ այն, որ պայմանագրից բխող սպառողական իրավունքների իրավատերը ճանապարհորդող երրորդ անձն է, հօգուտ ում կնքվել է պայմանագիրը, իսկ պատվիրատուն ծառայության դիմաց վճարելու պարտականություն կրողն է: Աշխատանքում հիմնավորվել է նաև «սպառող» և «զբոսաշրջիկ» կատեգորիաները տարանջատելու և սպառողական իրավունքներին վերաբերող բոլոր նորմերում որպես այդ իրավունքների իրավատեր սպառողին նախատեսելու անհրաժեշտությունը՝ հիմք ընդունելով այն, որ քաղաքացիաիրավական տեսանկյունից զբոսաշրջիկին որպես սուբյեկտ առանձնացնելն իրավական նշանակություն չունի, քանի որ ծառայությունների մատուցման հարաբերությունների իմաստով այդ ծառայություններից օգտվողը, համապատասխանաբար՝ օրենքով և պայմանագրով նախատեսված իրավունքները կրողը սպառողն է, որը զբոսաշրջիկներից բացի ընդգրկում է նաև մեկօրյա այցելուներին:

3. ՀՀ օրենսդիրը զբոսաշրջության ոլորտում երաշխիքով որպես բենեֆիցիար հանդես եկող սուբյեկտի հարցում որդեգրել է առանձնահատուկ մոտեցում՝ նախատեսելով, որ երաշխիքով որպես պարտատեր (բենեֆիցիար) հանդես է գալիս Հայաստանի Հանրապետությունը՝ ի դեմս պետական լիազոր մարմնի: Մեր կողմից հիմնավորվել է, որ այս լուծումը, որը հավանաբար ուղղված է այն պրակտիկան բացառելուն, երբ զբոսաշրջային գործունեության սուբյեկտների կամ որպես այդպիսիք ներկայացած անձանց հանցավոր գործողությունների արդյունքում սպառողների հանդեպ պարտավորությունները չկատարելու դեպքում պետությունը ստիպված է եղել ապահովել արտասահմանյան երկրներում հայտնված զբոսաշրջիկների հայրենիք վերադարձը՝ կրելով դրա հետ կապված ծախսերը, ոչ միայն չի բխում երաշխիքի՝ որպես մասնավոր պարտավորական իրավահարաբերությունների ապահովման միջոցի էությունից, այլև առաջացնում է գործնական կիրառության հետ կապված մի շարք խնդիրներ՝ պայմանավորված այս գործընթացին պետական մարմնի մասնակցությամբ:

Հետևաբար, նկատի ունենալով նախատեսված մեխանիզմի ինչպես իրավական, այնպես էլ գործնական կիրառության տեսանկյունից խոցելիությունը, առաջարկվել է երաշխիքի հիմնական սկզբունքներին համահունչ՝ որպես բենեֆիցիար պահանջ ներկայացնելու իրավունքը վերապահել պատվիրատուին (սպառողին):

4. «Զբոսաշրջության մասին» ՀՀ օրենքով ամրագրված զբոսաշրջային փաթեթի պայմանագրի պարտադիր պայմանների ուսումնասիրությունը վկայում է, որ օրենքում թվարկված պայմանների մի մասը կողմերի միջև համաձայնեցման ենթակա էական պայմաններ են, դիցուք՝ զբոսաշրջային փաթեթի նկարագրությունը և իրականացման ժամկետները, փաթեթում ներառված ծառայությունների նկարագրերը, զբոսաշրջային փաթեթի գինը, վճարման կարգը և այլն, իսկ մյուս մասը, ինչպես օրինակ՝ զբոսաշրջային գործունեության սուբյեկտների անվանումը, գտնվելու վայրը, որպես ծանուցված գործունեություն հաշվառման համարը, սպառողների իրավունքների, պարտականությունների վերաբերյալ տեղեկատվությունը և այլն, համաձայնեցում չենթադրող սոսկ տեղեկատվական բնույթի կամ օրենսդրական իմպերատիվ նորմերով արդեն իսկ նախատեսված պայմաններ են: Թեև ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 448-րդ հոդվածի բովանդակությունից առերևույթ կարող է տպավորություն ստեղծվել, որ օրենքում կամ այլ իրավական ակտերում պայմանագրի տվյալ տեսակի համար որպես անհրաժեշտ (պարտադիր) պայման մատնանշված ցանկացած պայման ինքնըստինքյան կարող է համարվել էական՝ դրանից բխող իրավական հետևանքներով, սակայն կարծում ենք՝ նման մեկնաբանությունը ոչ միշտ է իրավաչափ:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի տրամաբանությունից բխում է, որ պայմանագրի պայմանները ենթադրում են դրանց բովանդակության առնչությամբ կողմերի միջև համաձայնության ձեռքբերում, իսկ այդ պայմաններից էական (essential) կարող են համարվել միայն նրանք, որոնց կապակցությամբ կողմերի համաձայնությունն անհրաժեշտ և բավարար է պայմանագիրը կնքված համարելու համար: Էական պայմաններն ընդգծում են պայմանագրի գոյության իրավաչափությունն այն պարզ պատճառով, որ այն կարող է կնքված համարվել և իրավական ուժ ունենալ միայն երբ կողմերը իրենց **փոխհամաձայնեցված կամարտահայտությունն** են դրսևորել այդ պայմանների շուրջ, ինչի բացակայությունն առարկայազուրկ կդարձնի կողմերի միջև պայմանագրային հարաբերությունների գոյությունը: Ընդսմին Օրենքով որպես սպառողի հետ կնքվող պայմանագրի պարտադիր դրույթներ մատնանշված մի շարք պայմաններ չեն համապատասխանում էական պայման որակվելու չափանիշին:

Ուստի, մեր կողմից առաջարկվել է Օրենքի 23-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«**Հոդված 23. Զբոսաշրջային պայմանագրի էական պայմանները և պարտադիր դրույթները**.

1. Զբոսաշրջային պայմանագրի կողմերի միջև համաձայնեցման ենթակա էական պայմաններն են՝

1) սպառողին մատուցվող ծառայությունը և դրա նկարագիրը, այդ թվում՝ զբոսաշրջային փաթեթում կամ տուրում ներառված կամ առանձին զբոսաշրջային ծառայությունների նկարագիրը, մասնավորապես՝

ա. տրանսպորտային միջոցների տեսակը,

բ. ժամանման երկրում կամ վայրում հյուրանոցային տնտեսության օբյեկտի գտնվելու վայրը, տեսակը,

գ. սննդի կազմակերպման պայմանները,

դ.տեսարժան վայրեր այցելության ծրագրերը, մշակութային և այլ միջոցառումներ (առկայության դեպքում).

2) զբոսաշրջային փաթեթում կամ տուրում ներառված կամ առանձին զբոսաշրջային ծառայությունների մատուցման ժամկետները.

3) պայմանագրի գինը՝ բոլոր անհրաժեշտ վճարումների, հարկերի և տուրքերի մանրամասներով, գնի փոփոխման հանգեցնող հանգամանքների և այդ մասին սպառողին տեղեկացման ժամկետների ձևակերպմամբ.

4) վճարման կարգը, ժամկետներն ու պայմանները.

5) պայմանագրի վաղաժամկետ լուծման դեպքում կողմերի պատասխանատվությունը,

6) կողմ(եր)ի հայտարարությամբ՝ համաձայնեցման ենթակա այլ պայմաններ:

2. Զբոսաշրջային պայմանագրում պետք է նշվեն նաև.

1) զբոսաշրջային գործունեության սուբյեկտի լրիվ անվանումը (անհատ ձեռնարկատիրոջ դեպքում՝ անունը, ազգանունը), գտնվելու վայրը (անհատ ձեռնարկատիրոջ դեպքում՝ հաշվառման հասցեն), հեռախոսահամարը, բանկային հաշվեհամարը, պետական գրանցման (անհատ ձեռնարկատիրոջ դեպքում՝ հաշվառման) և, որպես ծանուցված գործունեություն, հաշվառման համարը,

2) զբոսաշրջային ապահովագրության վերաբերյալ տվյալները (եթե առկա են),

3) անչափահասներին մատուցվող ծառայությունների դեպքում՝ երեխայի կամ պատասխանատու անձանց կոնտակտային տվյալները,

4) սպառողների իրավունքների, պարտականությունների վերաբերյալ տեղեկատվություն,

5) մարդկանց ոչ բավարար քանակի պատճառով փաթեթը չեղյալ հայտարարելու մասին հաճախորդին տեղեկացնելու ժամկետը, եթե պայմանագրով փաթեթի իրականացման համար սահմանված է անհրաժեշտ նվազագույն քանակով մարդկանց առկայություն,

6) անձնագրերի, ժամանման կամ տարանցիկ երկրների մուտքի և ելքի հետ կապված պահանջների ու ձևակերպումների (արտոնագրերի,

սահմանային անցման, մաքսային և այլ ձևակերպումների) մասին տեղեկություն,

7) պատվիրատուի կողմից վճարված գումարը զբոսաշրջային ծառայություններ մատուցողներին փոխանցելու՝ նախատեսված ժամկետի մասին տեղեկատվություն,

8) սպառողի կողմից պայմանագրից հրաժարվելու դեպքում զբոսաշրջային ծառայություններ մատուցողների կողմից վաղաժամկետ լուծման վճար սահմանված լինելու և ըստ հրաժարվելու ժամկետների՝ վերադարձման ոչ ենթակա գումարի չափի մասին տեղեկություն:

3. Պայմանագրում սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված դրույթներից որևէ մեկի բացակայության դեպքում կողմը, որը լրիվ կամ մասնակի կատարել է պարտավորությունը կամ ընդունել է մյուս կողմից նման կատարում, կամ այլ կերպ հաստատել է պայմանագրի գործողությունը, չի կարող հղում անել պայմանագրի չկնքվածությանը:»:

5. «Զբոսաշրջության մասին» ՀՀ օրենքի, ինչպես նաև զբոսաշրջային ոլորտը կանոնակարգող ԵՄ դիրեկտիվի համադրված ուսումնասիրության արդյունքում մեր կողմից առանձնացվել են առանց դատարան դիմելու շահագրգիռ կողմի կողմից պայմանագրի միակողմանի լուծման հիմք հանդիսացող՝ կողմերից յուրաքանչյուրի կողմից պայմանագրի էական խախտման դրսևորումները: Դրանք են՝ զբոսաշրջային գործունեության սուբյեկտի կողմից.

1) զբոսաշրջային ծառայություններ չմատուցելը կամ դրանց մատուցումը կազմակերպելու ծառայությունը չմատուցելը,

2) նախքան ճանապարհորդությունը սկսվելը պայմանագրի էական պայմաններից մեկը փոխելը, եթե սպառողը չի տվել դրանց վերաբերյալ իր համաձայնությունը,

3) սպառողի այն հատուկ պահանջները չապահովելը, որոնց վերաբերյալ նա տվել էր իր համաձայնությունը,

4) զբոսաշրջային փաթեթում (տուրում) ներառված զբոսաշրջային ծառայության մատուցման ժամկետը խախտելը,

5) սպառողի կողմից զբոսաշրջային ծառայություններում այնպիսի թերություններ հայտնաբերելը, որոնք անհնարին են դարձնում ճանապարհորդությունը կամ մատուցված ծառայություններում առկա են էական թերություններ, որոնք չեն կարող վերացվել սպառողի համար ընդունելի ժամկետում,

6) պատվիրատուի կողմից փոխանցված գումարը սահմանված ժամկետում զբոսաշրջային ծառայություններ մատուցող անձանց չփոխանցելը:

Միաժամանակ պատվիրատուի (սպառողի) կողմից պայմանագրի

էական խախտման դրսևորումների խմբում առաջարկվել է ընդգրկել՝

1) պայմանագրով նախատեսված ժամկետում ծառայության դիմաց չվճարելը,

2) անհրաժեշտ տվյալներ և (կամ) դրանք հավաստող փաստաթղթեր չտրամադրելու կամ դրանց թերի լինելու կամ ծառայությունների մատուցման վերաբերյալ պատվիրատուի (սպառողի) ցուցումների հետ կապված հնարավոր անբարենպաստ հետևանքների առաջացման մասին զբոսաշրջային գործունեության սուբյեկտի կողմից պատվիրատուին (սպառողին) զգուշացնելուց հետո զբոսաշրջային գործունեության սուբյեկտի կողմից նշված ժամկետում անհրաժեշտ տվյալները և (կամ) փաստաթղթերը չներկայացնելը և (կամ) չհամալրելը կամ ծառայության մատուցման վերաբերյալ ցուցումները չփոխելը:

Բացի այդ, առաջարկվել է որպես արտադատական կարգով պայմանագրի միակողմանի լուծման հիմք հանդիսացող հանգամանքների էական փոփոխությունների դրսևորումներ Օրենքով ամրագրել զբոսաշրջային փաթեթի գինը սկզբնական գնի համեմատ 8 տոկոսից ավելի բարձրանալը, զբոսաշրջիկի ժամանման վայրում կամ դրա անմիջական մոտակայքում արտակարգ և անխուսափելի հանգամանքներ ի հայտ գալը, եթե դրանք զգալիորեն խոչընդոտում են զբոսաշրջային ծառայությունների մատուցմանը կամ զբոսաշրջիկի՝ ժամանման վայր հասնելուն, և զբոսաշրջիկների քանակը նախատեսված նվազագույն քանակից պակաս լինելը:

6. Օրենսդիրը նախատեսել է սպառողի կողմից զբոսաշրջային պայմանագրից հրաժարվելու դեպքում պայմանագրով վաղաժամկետ լուծման վճար վճարելու պայման նախատեսելու հնարավորություն:

Իրավաբանական գրականության մեջ և դատական պրակտիկայում առկա իրարամերժ դիրքորոշումների վերլուծության արդյունքում մեր կողմից եզրահանգվել է, որ պայմանագրի վաղաժամկետ լուծման վճարը պետք է դիտարկել որպես զբոսաշրջային գործունեության սուբյեկտների կողմից զբոսաշրջային ծառայություններ մատուցող անձանց փոխանցված ծառայությունների արժեքի այն մասը, որը, ըստ այդ ծառայություն մատուցողների ներքին կանոնների կամ վերջիններիս և զբոսաշրջային գործունեության սուբյեկտների միջև կնքված պայմանագրերի, որոշակի ժամկետում ծառայություններից հրաժարվելու դեպքում ենթակա չէ վերադարձի, ուստի այն ոչ այլ ինչ է, քան զբոսաշրջային գործունեության սուբյեկտի կրած փաստացի ծախս՝ պայմանով, եթե զբոսաշրջային գործունեության սուբյեկտը նման վճար սահմանված լինելու և համապատասխան ժամկետների մասին նախքան պայմանագիր կնքելը հստակ տեղեկացրել է պատվիրատուին, ինչն ամրագրվել է նաև պայմանագրում:

Ատենախոսության դրույթներն արտացոլված են հեղինակի հետևյալ հրապարակումներում.

1. «Զբոսաշրջային ծառայությունների մատուցման պայմանագիրը՝ որպես քաղաքացիական պայմանագիր, և դրա առարկայի որոշ առանձնահատկություններ», «Օրենքի պատվար» գիտամեթոդական ամսագիր, N 21, մարտ 2026, Երևան, «ՀՀ ՆԳՆ կրթահամալիր» ՊՈԱԿ հրատ., 206-221 էջեր:

2.«Ֆինանսական ապահովման ինստիտուտը՝ որպես զբոսաշրջիկների գույքային շահերի պաշտպանության միջոց», «Օրինականություն», N 134, 2023, ՀՀ դատախազության գիտագործնական պարբերական, Երևան, «Աստղիկ գրատուն» հրատ., 207-230 էջեր:

3. «Զբոսաշրջային ծառայությունների մատուցումը կազմակերպելու պայմանագրի էական պայմանների մեկնաբանման որոշ հիմնախնդիրներ», «Արդարադատություն», 1 (60) 2025 հոկտեմբեր, Երևան, «Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության հրատ. 45-55 էջեր:

4. «Զբոսաշրջային ծառայությունների մատուցման պայմանագրի փոփոխման և լուծման առանձնահատկությունները» (համահեղինակությամբ՝ Ա. Հայկյանցի), «Բանբեր Երևանի համալսարանի. Իրավագիտություն», 2025, Vol. 16, No. 2(43), նոյեմբեր, Երևան, 113-134 էջեր:

5. «Զբոսաշրջային փաթեթում ներառվող զբոսաշրջային ծառայությունների համար քաղաքացիական պատասխանատվության սուբյեկտը», «Օրինականություն», N 135, 2024, ՀՀ դատախազության գիտագործնական պարբերական, Երևան, «Աստղիկ գրատուն» հրատ., 100-120 էջեր:

6.«Զբոսաշրջային օպերատորի և գործակալի քաղաքացիական պատասխանատվության տարանջատման որոշ հիմնախնդիրներ», «Պետություն և իրավունք», N 1(95), 2023, ԵՊՀ հրատ., Երևան, 49-58 էջեր:

7.«Զբոսաշրջային գործունեության սուբյեկտներին քաղաքացիական պատասխանատվությունից ազատելու պայմանները», «Դատական իշխանություն», ապրիլ-հունիս 2025 4-6 (310-312), Երևան, 47-55 էջեր:

ЕВА ГАГИКОВНА САГОЯН

ПРАВОВОЕ РЕГУЛИРОВАНИЕ ДОГОВОРА ОБ ОКАЗАНИИ ТУРИСТИЧЕСКИХ УСЛУГ ПО ГРАЖДАНСКОМУ ЗАКОНОДАТЕЛЬСТВУ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

Туризм является второй по темпам роста отраслью мировой экономики и обладает значительным потенциалом для преобразования траектории развития страны. Во всём мире, в том числе и в нашей стране, число туристов за последние десятилетия многократно увеличилось, и это не случайно, поскольку путешествия в познавательных, рекреационных, оздоровительных, деловых и иных целях являются неотъемлемой частью жизни современного человека.

Несмотря на постоянно расширяющиеся возможности самостоятельной организации путешествий гражданами через интернет в условиях развития информационных технологий, сохраняется стабильное число людей, которые предпочитают доверять организацию своих поездок профессионалам отрасли-субъектам туристической деятельности.

Хотя с принятием в 1998 году Гражданского кодекса Республики Армения договор оказания туристических услуг впервые был закреплён в качестве разновидности договора возмездного оказания услуг, основы правового регулирования туризма как самостоятельной отрасли в Армении были заложены в 2003 году с принятием Закона РА "О туризме и туристической деятельности". Однако указанный закон вследствие ряда принципиальных пробелов так и не обеспечил надлежащего правового регулирования отрасли.

В целях совершенствования туристического законодательства и приведения его в соответствие с международными стандартами, в том числе в рамках принятых Арменией международных обязательств, в 2023 году был принят новый Закон РА "О туризме", которым был заимствован ряд положений из директивы ЕС, регулирующей данную сферу. Тем не менее предпринятую попытку приблизить национальное туристическое законодательство к праву ЕС трудно признать успешной.

Проблемы и пробелы правового регулирования договорных отношений в сфере туризма, а также необходимость их устранения в целях

формирования правовых предпосылок для эффективной защиты прав и законных интересов участников данных отношений обусловливают актуальность настоящего исследования.

Научная новизна диссертации заключается в том, что в отечественной юридической науке впервые осуществлён комплексный анализ проблем, связанных с институтом оказания туристических услуг.

На основе анализа теоретических подходов, отечественного и зарубежного законодательства, а также судебной практики раскрыта сущность договорных отношений между субъектами туристической деятельности и потребителями, определено место заключаемого между сторонами договора в системе гражданско-правовых договоров, а также рассмотрены вопросы гражданско-правовой ответственности субъектов туристической деятельности, её финансового обеспечения, изменения и расторжения договора и иные проблемы, связанные с исследуемой темой.

В результате сформулированы теоретические выводы и разработаны предложения, направленные на совершенствование законодательства.

Научная новизна диссертации находит отражение в положениях, выносимых на защиту, а также в теоретических обобщениях и практических предложениях автора, представленных в заключении диссертации.

YEVA GAGIK SAGHOYAN

LEGAL REGULATION OF THE CONTRACT FOR THE PROVISION OF TOURISM SERVICES UNDER THE CIVIL LEGISLATION OF THE REPUBLIC OF ARMENIA

Tourism is the second fastest-growing sector of the global economy and possesses significant potential to transform a country's development trajectory. Worldwide, including in our country, the number of tourists has increased manifold over recent decades. This trend is no coincidence, as travel for educational, recreational, health-related, business, and other purposes has become an integral part of modern life.

Despite the continuously expanding opportunities for individuals to independently organize their travel via the internet amid rapid advances in information technology, a substantial number of people still prefer to entrust the organization of their trips to industry professionals-entities engaged in tourism activities.

Although the Civil Code of the Republic of Armenia, adopted in 1998, for the first time recognized the contract for the provision of tourism services as a type of remunerated services contract, the foundations for the legal regulation of tourism as an independent sector in Armenia were laid in 2003 with the adoption of the RA Law "On Tourism and Tourist Activities". However, due to a number of fundamental shortcomings, this law failed to ensure adequate regulation of the sector.

In order to improve tourism legislation and align it with international standards, including within the framework of Armenia's international obligations, a new RA Law "On Tourism" was adopted in 2023. This law incorporates a number of provisions drawn from the Directive (EU) 2015/2302. Nevertheless, the attempt to harmonise national tourism legislation with EU law can hardly be regarded as successful.

The existence of problems and gaps in the legal regulation of contractual relations in the field of tourism, as well as the need to address them in order to establish an effective legal framework for the protection of the rights and legitimate interests of the parties involved, determine the relevance of the present study.

The scientific novelty of the dissertation lies in the fact that, for the first time in domestic jurisprudence, a comprehensive analysis has been conducted of the issues related to the provision of tourism services. Based on an analysis of theoretical approaches, domestic and foreign legislation, as well as judicial practice, the essence of contractual relations between tourism entities and consumers has been revealed, the place of the contract concluded between the parties within the system of civil law contracts has been determined, and issues of civil liability of tourism entities, its financial security, as well as the alteration and termination of the contract, along with a number of other related problems, have been examined. As a result, both theoretical conclusions and proposals aimed at improving legislation have been formulated.

The main provisions of the thesis are reflected in scientific articles published by the author, and were also presented at various scientific conferences.